<<Ինտերակտիվ կրթության զարգացում>> հիմնադրամ

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ- *Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:*

ԱՌԱՐԿԱ *Աշխարհագրություն*

ՀԵՂԻՆԱԿ *Մարգարյան Հեղինե*

ՄԱՐԶ *Արագածոտնի մարզ*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ *Բերքառատի Միջնակարգ դպրոց*

Բովանդակություն

Ներածություն 2

1.1 Սովորողների հետ ուսուցչի համագործակցության եզրերը։. 3-5

1.2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը,դպրոցականների առաջադիմության վրա։ 5-7

2.Եզրակացություններ 7-8

3.Գրականություն 9



ՅՈԹ ԱՁՆԻՎ ՊԱՏԳԱՄ

Ուսուցչուհին ասաց մեզ.
-Ձեզ յոթ սեր եմ պատգամում -
Նախ՝ Հայրենի՛ք սիրեցեք,
Ուրիշ մեծ սեր չի լինում:

Ծնողներին սիրեցեք -
Նրանցի՛ց եք ծնվել դուք:
Եվ մայր լեզուն սիրեցեք -
Նրանո՛վ եք սնվել դուք:

Բնությունը սիրեցեք -
Մա՛րդ կպահի նա միշտ ձեզ:
Ազնվությունը սիրեցեք -
Վա՛րդ կպահի նա միշտ ձեզ:

Միշտ սիրեցեք աշխատանք
Ու մեծ արվե՛ստ սիրեցեք:
Եվ այս հավերժ լուսնի տակ
Մեկին հավե՛րժ սիրեցեք...

Ով իրեն է լոկ սիրում՝
Նա դժբախտ է աշխարհում:
Յոթ սրբություն թե սիրեք -
Յոթնապատիկ կսիրվեք...

Ներածություն

Ուսուցչի և ծնողների խնդիրն է յուրաքանչյուր երեխայի երջանկություն պարգևել

Աշակերտների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է։

Արդյունավետ դաստիարակության գաղտնիքը աշակերտի հանդեպ հարգանքի մեջ է։

Ռ.Էմերսոն

Հայաստանի հանրապետությունում իրականցվող բարեփոխումները ընդգրկել են իրականության գրեթե բոլոր ոլորտները,բուռն փոփոխությունների է ենթարկվում հատկապես կրթությաան համակարգը։Կրթության համակարգի բարեփոխումները նպատակ ունեն կրթությունը կազմակերպել ժամանակակից պահանջներին համաձայն։Արդի աշխարհում մարդն ավելի հաճախ է հայտնվում իր համար նոր՝անծանոթ միջավայրում,որում կողմնորոշվելու և որոշումներ կատարելու համար նա նկատելի չափով մնում է անօգնական։Կրթության համար կարևոր նպատակ է դառնում ձևավորել ուժեղ,ինքնուրույն,մարտահրավերներին դիմակայելու պատրաստ անհատներ,մարդիկ,որոնք ունեն,թե գիտելիքների անհրաժեշտ պաշար թե այդ գիտելիքները անծանոթ իրավիճակներում կիրառելու կարողություններ և ստեղծագործական մտածողություններ։

Այսօր տեղեկատվության ահագնացող աճը դրա ակնթարթային հասանելիությունը ստիպում է հասարակությանը կարևորել ոչ միայն թե ինչքան է սովորել մարդը այլ նաև թե ինչպես է սովորում՝ ինչպես է կարողանում կողմնորոշվել տեղեկատվական հեղեղում այսինքն այսօր գերակա խնդիր է դարձել սովորել սովորեցնելը։

Սովորողի ծնողների ուսուցչի համագործակցության եզրերը

<<Կրթությունը պետք է լինի ճշմարիտ լիակատար պարզ ու հաստատուն>>

Կամենսկի

Կրթություն ստանալը դասական դարաշրջանում համարվում էր սրբազան գործունեություն ուսուցիչը ակնածանքի արժանի էակ։

Արդի ժամանակաշրջանում երբ աշակերտների մեծ մասը կորցրել է հավատը գիտելիքի ուժի նկատմամբ,նորագույն տեխնոլոգիաների պայմաններում նվազել է նրանց սերը դեպի ընթերցանություն,և ընդհանրապես սերը գրքի և ուսման հանդեպ շուկայական հարաբերությունների խորացման պարագայում շատերը կրթությունը սկսեցին ընկալել որպես սոսկ շուկայական առք ու վաճաք՝ դադարելով զգալ սովորողի բերած խորհուրդը,այդ գործընթացում առկա է սերը և մարդու վրա դրա ունեցած վեհացնող ազդեցությունը կրթությունը նպատակից դառնում է միջոց։Զգտելով շուտ և հեշտ հասնել նյութական բարեկեցության նորօրյա <<սովորողները>> սկսել են խուսափել իրենց<<միտքը>> <<ավելորդ>> գաղափարներով ծանրաբեռնելուց՝սովորելով միայն այն և այնքան,որքան, իրենց կարծիքով պետք է ապագա մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար…

Այս դեպքում արդեն առաջ է գալիս ապամարդկայնացման վտանգը այդ իսկ պատճառով լուրջ պահանջներ է դրվում թե դպրոցի,թե ընտանիքի առջև որպեսզի ժամանակի մեծ մասը չտրամադրեն մեխանիկորեն սերտելուն կարդալ-մտորել-իմաստավորելու փոխարեն։

Ուսուցչի և ծնողների համագործակցության եզրերը պետք է հանդիսանա այն,որ սովորողը ունենա կապվածության զգացողություն այն ամենի համդեպ ինչ սովորում է, և այն հոգատար մարդու հանդեպ ով սովորեցնում է երբ ուսուցիչը ինչ որ բան լավ է պատմում լավ է նկարագրում սովորողի հոգում առաջանում է լուսավոր բավարարվածության զգացում։Դա հնարավորություն է տալիս մղվելու նորի,անհատի որոնումների,այն ակունք է տալիս մեր մտքի պրպտումներին ։Զգտում ենք հասու լինել ճշմարտությանը հասկանալ նորանոր գաղտնիքներ որոնց իմացումը սիրող աշակերտներին բերում է երջանկության և բավարարվածության զգացում այս բոլորը կատարելու համար այսօր ուսուցիչ-ծնող փոխհարաբերության կայուն և արդյունավետ լինելու համար ստեղծել ծնողների ակումբ,

Որ ծնողները կարողանան հաճախակի շփվել միմյանց հետ մտքերի փոխանակության նոր փորձի ներդրման սովորողների առջև ծառացած խնդիրները միասնական ուժերով լուծելու հնարավորություն ընձեռնվի։Ըստ Ուշինսկու՝ ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ քանի դեռ սովորում է, երբ նա դադարում է սովորել նրա մեջ մահանում է ուսուցիչը։Անտարակույս,եթե ուսուցիչն ունի բավարար մասնագիտական և մանկավարժական որակ կարող է լիարժեք լուծել իր առջև դրված խնդիրը՝դաստիարակել և գիտելիքներով զինել աշակերտներին։Այսօր ուսուցչի և աշակերտների առջև դաստիարակության հրատապ հարց է ծառացել՝ արյունարբու թշնամին երբեք թույլ չի տալիս մեր սուրը պատյան դնենք։44-օրյա պատերազմը մեր դալար շիվերը՝18-20 տարեկան տղաներին կոտրեց և մերթընդմերթ շարունակվում է։Ուսուցիչներից և ծնողներից պահանջվում է ավելի լրջորեն մոտենալ կրթվելուն և հայրենասիրությանը։Արամայիս Սահակյանի խոսքերով ասած <<Մի բուռ էինք դարձել ենք կես բուռ,իսկ այդ կես բուռն էլ արտասուք է լուռ>>։Այո կայծից հրդեհ է բռնկվում,մենք չպետք է ընկճվենք,այլ ավելի արիանանք , ներկա ու գալիք սերունդներին գաղափարապես զարգացնելու միջոցով. մենք պետք է հաղթենք,սակայն պարզ է մի հանգամանք ևս դպրոցը չի կարող կազմակերպել և իրագործել ամբողջ աշխատանքը,եթե ընտանիքը և ծնողը ևս շահագրգռված է չէ այդ հարցում։

Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը առաջադիմության վրա

Ուսուցումը այն ծաղկի թերթերից մեկն է,որը կոչվում է

Դաստիարակություն։

Վ.Ա.Սուխումլինսկի

Ռուս նշանավոր գրող Լ.Տոլստոյը ժամանակին դիպուկ կերպով ասել է.<< մենք բոլորս ծնունդով մանկությունից ենք>>։Հիրավի մեզանից յուրաքանչյուրը իր հոգեկերտվածքի մեջ կրում է ավելի վաղ տարիքի մանկության և պատանեկության դրոշմը,լավ ու վատ տպավորություններով։Երեխայի հոգեբանության և առողջ մտածելակերպի ձևավորման վրա առաջին հերթին կարևոր դեր ունի ընտանեկան դաստիարակությունը հայտնի է որ մարդու էության 20%-ն է միայ բնատուր և հաստատուն իակ մյուս՝ 80%-ը ներկայացնող հատկանիշները արդյունք են դաստիարակության և շրջապատից ստացվող ազդակների։ Դրանք ենթակա են փոփոխության նախադպրոցական տարիքի երեխաների ձևավորման և հետագա զարգացման հարցում առաջին հերթին կարևոր է ընտանիքի դերը։ԸՆտանիքը և դաստիարակությունը միշտ քայլել են ձեռք ձեռքի տված։Դրանցից մեկի բացակայությունը միշտ էլ հանգեցնում է խնդիրների,որոնք կարող են ծագել թե մանուկների և թե դեռահասների մոտ։Կարելի է առանձնացնել մի քանի գործոններ,որոնք պայմանավորված են երեխայի զարգացումը՝ֆիզիկական և հոգեբանական առումներով։

Ա)Ընտանիքի լիարժեքություն

Բ)Ընտանիքի անդամների՝հատկապես ծնողների միջև համերաշխ մթնոլորտի առկայություն

Գ)Երեխայի ապագայի հանդեպ պատասխանատվության զգացումով,հետևողական և ճիշտ դաստիարակությամբ։

Ծնողական կողմերից որևէ մեկի բացակայությունը ընտանեկան հաճախակի վեճերը,լարված մթնոլորտը և երեխաների նկատմամբ անուշադրությունը անդառնալի հետքեր են թողնում նրանց հոգեբանության վրա։Այսօր դպրոցն ու հասարակությունը հաճախ են կանգնում նման փաստի առաջ։Ընտանիքը մեծ ու երկարատև դպրոց է,որն անձին կերտում է և նախապատրաստում է դպրոցին,ընտանեկան դաստիարակությունը շարունակվում է դպրոցական տարիների ընթացքում և դրանից հետո ըստ էության, այն,ինչ ընտանիքում տեսնում և ընկալում են մանկության,պատանեկության տարիներին նույնը հետագայում

կիրառում են իրենց կազմած ընտանիքներում ուստի ամեն երեխա իր ընտանիքի պատկերն է նրա դաստիարակության պտուղը իզուր չի ասված երեխան ընտանիքի հայելին է։

Օրվա մեծ մասը երեխաներն անցկացնում են տանը ուստի կարևոր է,որ այն դաստրաիարակից գործընթացը ինչ սկսվում է դպրոցում շարունակվի տանը՝ ծնողների վերահսկողությամբ։Ծնողների խնդիրն է որոշակի պատասխանատվության տակ դնել երեխաներին այս խնդիրը արդիական է բոլոր ժամանակներում։Հիմա էլ շատ ընտանիքներում տաղանդավոր ընտանիքների կործանման պատճառ է դառնում նման կարգի բացակայությունը։Դրական հույզերի,ծնողների իրավացի պահանջկոտության պահպանման պայմաններում երեխաները վարժվում են և պարտաճանաչության և կարգապահության,նրանք դառնում են աշխատասեր։Պետք է ձգտել այն բանին,որ յուրաքանչյուր սովորող տեսնի և իմանա ավելի շատ,քան տեսել ու իմացել են նրա հայրն ու պապը։Որքան էլ մեր հանրակրթական համակարգում տեղի են ունեցել էական բարեփոխումներ այնուհանդերձ մեր գյուղերում կան ընտանիքների ու երեխաների լուծման կարոտ բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրներ այս ոլորտում բարեփոխումները չեն ավարտվել և առաջիկա տարիներին պետք է ամբողջ թափով շարունակվեն և կանխվեն ընտանիքների հատկապես երեխաների կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը և շատ դեպքերում ճակատագրական դառնալը։Հիմա էլ կան մերօրյա <<Գիքորներ>>,որոնք սոցիալապես անապահովության արդյունք են կամ արտագնա աշխատանքը,որ շատ ընտանիքների բաժանվելու պատճառ է հանդիսանում։ Իսկ այս բոլորը բացասաբար է ազդում սովորողների ինչպես առաջադիմության այնպես էլ հոգեվիճակի վրա։Հետազոտական աշխատանքը չէ,որ ես նոր պիտի ծանոթանամ և համագործակցեմ ծնողների հետ։Աշխատանքային երկար տարիների փորձս թույլ է տվել ընտանիքների հետ փոխհամագործակցելով շատ-շատ երեխաների և ծնողների համախմբել,համոզել,բացատրել ու լավ արդյունքների ենք հասել,սակայն դեռ կան իրադարձություններ,որոնք ի զորու չեն որևէ միջամտության ։Այսօր իմ դասղեկ դասրանի 2 տղաներ գտնվում են հոգեպես ընկճված վիճակում,քանի որ նրանց ծնողները արտագնա աշխատանքի պատճառով միմյանց չհասկացան և բաժանվեցին։Թեև կարողանում ենք այնպես անել,որ աջակից լինենք ինչպես դպրոցում այնպես էլ ընտանիքի առջև ծառացած խնդիրներին,բայց ծնողներից հեռու գտնվելու դրոշմը երևում է ինչպես դեմքի,այնպես էլ հոգու վրա է դաջված։Սովորողների կրթության վրա միանգամայն բացասաբար է անրադառնում,եթե ծնողներից մեկը զբաղվում է ալկոհոլային

խմիչքներ օգտագործելով։Գտնում եմ, որ անհրաժեշը է համալիր մոտեցմամբ գործի դնել հասարակության բոլոր օղակները՝հոգեբանական,բժշկական,սոցիալական ապահովման և այլն։

Ավանդական դպրոցում հրահանգչական բնույթ կրող ոսումնական ծրագրերն ուսուցչին հնարավորություն չէին տալիս ազատ գործել ։ Այժմ մեր դպրոցները ունեն հնարավորություն աշակերտների մեջ ժարգացնելու այնպիսի հմտություններն,որոնք նրանց ապագա գիտելիքները կիրառելի կդարձնեն կյանքում։ Այդ հնարավորությունը տալիս է համագործաքցային ուսուցումը։ Համացժգործաքցային ուսուցումը ժամանակակից կրթության ամենից շատ ուսումնասիրված ոլորտներից է։Այս մոտեցումն առավելագույնս է համապատասխանում ուսուցման փոփոխված նպատակներին, որի անտեսմամբ հնարավոր չէ լուծել այն բազում խնդիրները ,որոնք այսօր ծառացել են հասարակության առջև ։Ուսուցման ավանդական և նոր մոտեցումնեևի միասնությունը կտա հնարավորություն լուծելու հասարակության առջև ծառացած գլխավոր խնդիրը , այն է՝ նոր անձի՝ անհատի ձևավորումը ։ Այսինքն հարկավոր է դաստիարակել այնպիսի անհատ , որը ոչ միայն զինված կլինի հարուստ գիտելիքներով , այլև՝ օժտված ճանաչողական ;հաղորդակցային , համագործակցային հմտություններով ,ստեղծագործական մտածողությամբ և ինքնուրույնունեության կարողությամբ ։ Հաղորդակցային ուսուցումը տվյալների բովանդակային հարցերի սոսկ հացորդոըմ չէ։ Այն նաև հետագա կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների , հմտությունների ձեռք բերման ,մշակույթ ձևավորելու եցանակ է ։Ուստի մեզանից պահանջվում յուրացնել նոր գաղափարները ՝ նոր պայմաններում արդյունավետ աշխատելու համար ։ Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում ուսուցիչն է։ Համագործակցային ուսուցման հաջողությունը հիմնականում պայմանավորվոիմ այն հանգամանքով ,թե ինչպիսի գիտելիքներ ,հմտություններ և փորձ ունեն ուսուցիչները ։ Ավանդական դպրոցի ուսուցչի ուսուցչի համար բոլորովին հեշտ չէ հրաժարվել մինչև այժմ կիրառված իր աշխատաձևից , ուսուցչակենտրոն մեթոդներից և անցում կատարել միանգամից աշակերտակենտրոն մեթոդնորին ։ Մեթոդական առումով կառուցոցականությունը օգնում է հասկանալ ,թե ինչպես է ժարգանում ճանաչոցությունը ՝ ուսուցչի վարպետության և աշակերտի հետ համագործակցության միջոցով ։ Այսինքն՝ այսօր մանկավարժության առաջնահերթ խնդիրն է նպատակների իրականացումն ապահովող ուսուցման նորարարական մերոդների որոնումը ։ Պետք է կիրառենք աշակերտակենտրոն մոտեցումներ , խրախուսվեն համագործակցությունը , նախաձեռնությունը,ստեղծագործական

մտածողությունը։ Այս տեսանկյունից առավել արդյունավետ է ուսուցման փոխներգործուն մեթոդը, քանի սովորողների մասնակցությունը իրենց իսկ ուսումը կազմակերպելիս։ Այն նպաստում որ այն ապահովում է է փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծմանը, որը կօգնի բարդություններից ձերբազատվել։
ստեղծմանը, որը կօգնի նվազեցնել անդամների արդյունավետ համագործակցությունը Բարյացկամ մթնոլորտի տեղեկատվության վերլուծությամբ ինքնուրույն եզրահանգումներ կատարելուն։Այսպիսով մենք չենք համագործակցում, կամ դաստիարակում որևէ մեկկին ,եթե նրանում փոփոխություն չենք առաջացնում։

Նույնիսկ ուժեղ ինքնակառավարում ունեցող մարդը մի շարք անբարենպաստ պայմաններում անզոր է լինում կառավարել իրեն՝դառնալով գուցե և իր իսկ ստեղծած պայմանների գերին։

Եզրակացություն

Այս աշխատանքի նպատակն է արդյունավետ ուղիներ փնտրելու ծնողներին և երեխաներին օգնելու կրթության և դաստիարակության հարցում<ինչը կարող է իրականցվել միմյայն ընտանիքի դպրոցի և հասարակության համագործակցված աշխատանքի շնորհիվ։

1.Ծնողները կարող են լինել լիարժեք զարգացած անհատներ սակայ ինքնատիրապետումը կորցնելով՝բռնություն գործադրել երեխայի ագրեսիվությունը կառավարելու համար

Ագրեսիվ ծնողը դաստիարակում է նույն տիպի երեխա,որն իր հերթին դառնում է ագրեսիվ ու թերի ծնող,դրանից խուսափելու համար անհրաժեշտ է վերահսկել ագրեսիան և կանխել ծեծի ու բռնության գործադրումը։

2.Ստեղծել ծնողների ակումբ յուրաքանչյուր ամիս հանդիպումներով վեր հանել այդ պահին ի հայտ եկած դժվարություններն ու թերությունները համագործակցեկ ուսուցչի հետ։

3.Դաստիարակության համար համձայն սոկրատյան հայեցակարգի՝պետք է բացառել,հարկադրանքն ու ծեծը և դաստիարակության ներդաշնակ միջոց համարել համոզելու մեթոդը։Իսկ ընդհանրապես ուսուցիչն ու չնողը պետք է լինեն հոգատար,խնամող և սիրող,սակայն պահանջկոտ և հետեվողական։Եվ հետևելով <<Ամեն ինչում ոսկե միջինը>>սկզբունքին՝ անհրաժեշտ է պահպանել չափի զգացումը,խստապահաջության և քնքշանքի միջև։

4. Ուսուչիցը պետք է հարգալից և բարեկամաբար վերաբերվի աշակերտների ծնողներին նրանց ընդունի որպես գործընկեր և աջակից ։

5. Ուսուցիչը աշակերտների ծնողներին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում նրանց երեխաների ուսումնառության վերաբերյալ ինչպես նաև խորհրդատվություն նրանց կրթական կարիքների առնչությամբ։

6. Ամեն ինչ սովորել և սովորեցնել օրինակներով,խրատներով և գործնական կիրառելով։

7. Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների և աշակերտների գնահատականի վրա ոչ մի կերպ չպետք է ներազդի աշակերտների ծնողների կողմից ուսումնական հաստատությանը ցուցաբերված աջակցությունը անկախ դրա ձևից,չափից,կարևորությունից և բարդության աստիճանից։

8. Վերջնական նպատակի արդյունքը լինի այսպիսին

Սովորող



Ծնող

Ուսուցիչ

Գրականություն

1.Կ.Դ.Ուշինսկի-Մանկավարժական հայացքներ

2.Յու. Ամիրջանյան,Ա.Սահակյան-Մանկավարժություն

3.Հայ մամուլ <Ընտանիք և դպրոց> մեթոդական ամսագիր

4.<Քայլ առ քայլ >- ի չափորոշիչների կիրառումը դասարանում

5.Մանկավարժական հիմնախնդիրմերը հայ ընտանիքում 21-րդ դարի մարտահրավերների կանխման և հաղթահարման ուղիները։

6.Հովհաննիսյան Գ. և ուրիշներ- Կրթության արդի հիմնախնդիրները։